ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Ա. ՇՐՋԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ    ԹԻՒ 5    ՆՈՅԵՄԲԵՐ 1


# ԳԵՐԵԶՄԱՆՔ ՀԱՅՈՑ

ԽՕՍՔ

Նշան , Օհրապեան .




1 Լուռ և մըխուր Հայոց դաշտեր գեղեցիկ ,
Քաջօրերոյն աճիւններով դեռ ահեղ ,
Ուր Սուրբ շիրմաց ծաղկէ տեսիլ խաղաղիկ ,
Զարմենազան հազար ծաղիկ գունագեղ :

Աւաղ հայոց արեւուն ,
Աւաղ հայոց քաջերուն ,
Որոց կերեմք մեք արիւն ,
Օրհնեալ' է , Հայք , ձեր անուն :

2 Ո՛վ հէգ Նախնեաց , կըտրիճ եղբարց Սը՛ շիրիմք ,
Ձայն մը տուէք , որ մեր արտասուքը ցամքի ,
Վանկ մը հերիք ցաւած սրտից որ ըմբռնիմք ,
Մեզ ժըպտեցէք շիջեալ աստեղք Հայրենի :

Աւաղ Հայոց . . . .

3 Բացէք , բացէք մամուռ սափորք սըրբակիրք ,
Ցուցէք քաջացն ոսկերոտիքն համբուրենք ,
Եւ համբուրէ մեր ողբացող հայրենիք ,
Մեք հարազատ որդիքս ողբամք ու երգենք :

Աւաղ Հայոց . . . .

4 Գեռք Հայրենիք քանի 'ի ձեզ կան ալիք ,
Եւ դուն , լուսին , քանի կանթեղդ վառ մնայ ,
Դուն ալ , ախակ քանի ունիս դալարիկ ,
Երգեցէք պըհայն , լռին սերունդք ազգայ :

Աւաղ Հայոց . . . .

# ՄԱՐՇ

ԽՕՍՔ

Ս. Գ. Գ. Փափազեանց



# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ Տես Թիւ 1 . 2 . 3 . 4 .

Ութը գիր 1/4 ժամանակ ըլլալու համար ծունկը կը գործածուի և իր զօրութիւնը ութը գիրի կը հասնի, ինչպէս



Չորս գիր 1/4 ժամանակ ըլլալու համար կիսաթաւը կը գործածուի և իր զօրութիւնը մինակ մէկ գրի կազդէ ինչպէս

ա 1½ քայ. ք ½ քայ.



Տասն և վեց գիր 1/4 ժամանակ ըլլալու համար ծնկերը կը գործածուի՝ և իր զօրութիւնը տասն և վեց գիրի կը հասնի՝ ինչպէս



Երեք կամ հինգ գիրեր 1/4 ժամանակ ըլլալու համար հաւասարը կը գործածուի, ինչպէս



Երաժշտութեան մէջ շատ անգամ դրած կամ կարդացած ժամանակնիս ձայնը կտրել ուրիշ կենալ պէտք կըլլայ, և հանգիստ քառնիս ալ այս է. ուստի պէտք է գիտել 1/4 ժամանակու մէջ որքան լուռ երգալը և լռելը քանի քայ է՝ նէ պէտք է, որ նոյն գիրին առաջը կամ ետքը գրենք

ինչպէս



## ՆԱԽՆԹԱՑ ԴԱՍԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ:





Շարունակելի:

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ Տես Թիւ 1 . 2 . 3 . 4 .

Նախնթաց դասերուն վրայ վարժութիւններ.



Այսպէս գործնական վարժութիւնները կըլլայ խաղերուն անունները սալով երգել և ձեռքի շարժումներն ալ ընել:





Ձայնահասները սորվելու համար օրինակներ.



Այսպէս վարժութիւնները աւելի աղէկ հասկցնելու համար պէտք որ ուսուցիչը սալէ և փայտ դրան բանալիներուն և ձայնահասներուն վրա միջոցներ գործածէ և բախումներն ալ ընել տայ.

Շարունակելի:

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՀԵՂԻՆԱԿՔ

Գ. Յ. Էրամեան }
Ն. Ս. Թաշճեան } Դասատուք Երաժշտութ. Ազգային դպրոցաց